ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 նոյեմբերի չորեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

156
(2636)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 125

2020 թվականի մայիսի 16-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը, երբ դեռ այն ժամանակ չէր խուսափում լրագրողների հետ շփումներից, մամուլի ասուլիսներ էր կազմակերպում, ասուլիսից առաջ, ավանդույթի ուժով 100 փաստ էր ներկայացնում՝ գովելով թե՛ իրեն, թե՛ իր ներկայացրած կաբինետը: Այդ օրվա ասուլիսի 92-րդ փաստն այն մասին էր, որ Ազգային ժողովը հաստատել է անձի կամ անձանց խմբի նկատմամբ բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը քրեականացնող օրենսդրական կարգավորումը: «Այսուհետեւ բռնության կոչեր տարածողները կամ բռնությունը հրապարակայնորեն արդարացնողները կդատապարտվեն տուգանքով կամ ազատազրկմամբ. մինչեւ 1 տարի ազատազրկում է նախատեսվում»,- ասում էր նա:

Այդ հայտարարությունից թե՛ հետո, թե՛ առաջ, սակայն, հենց ինքը՝ Փաշինյանը, մեկ անգամ չէ, որ բռնության կոչով է հանդես եկել՝ ասելով՝ «պատերին կծեփենք», «ասֆալտին կպառկեցնենք», «թաթիկները կկտրենք»՝ դեռ չասած 2021-ի խորհրդարանական արտահերթ ընտրության ժամանակ ասած «բոլորին շ*նելու» եւ մուրճով հարցերը լուծելու պատրաստակամության մասին: Այդ հայտարարություններից հետո իրավապահ համակարգի որեւէ կառույց դրանք չի ուսումնասիրել, ու Փաշինյանի խոստացած՝ օրենքի տառին համապատասխան վերոնշյալ՝ բացահայտ բռնության կոչեր պարունակող արտահայտությունները քննության առարկա անգամ չեն դարձել: Եվ, փաստորեն, Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ ստել է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներից շատերի համար զարմանալի չի եղել, որ հոկտեմբերի 31-ին Սոչիում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի եւ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպումից հետո որեւէ փաստաթուղթ չի ստորագրվել: Բանն այն է, որ պատգամավորների մի շրջանակ ամեն դեպքում տեղյակ էր, որ ՌԴ-ն 15 կետից բաղկացած փաստաթուղթ է ներկայացրած եղել, որի 14 եւ 15 կետերը խնդրահարույց են եղել երկու կողմերի համար: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթին պատգամավորները պատմեցին, որ 14-րդ կետը վերաբերել է Արցախում ռուսական խաղաղապահ առաքելության ժամկետի երկարաձգմանը, որին Հայաստանը կողմ է եղել, Ադրբեջանը՝ դեմ, իսկ 15-րդ կետը վերաբերել է Արցախի ինքնորոշման հարցին, որին նույնպես դեմ է եղել Ադրբեջանը: Չնայած արեւմտյան տարբերակով եւս Արցախի ինքնորոշման հարցը չի կարգավորվում, սակայն հաշվի առնելով սեպտեմբեր ամսվա Ադրբեջանի գործողություններից հետո ՌԴ կողմի չեզոքությունը՝ իշխող թիմը շարունակում է հակված մնալ արեւմտյան տարբերակին եւ նրանց հետ հարաբերությունների կարգավորմանը՝ կտրելով ՌԴ-ի հետ կապը: Ամեն դեպքում, այս պահի դրությամբ անորոշ է խաղաղապահների ապագան, եւ չնայած Փաշինյանն ասել էր, թե պատրաստ է ստորագրել երկարաձգման հարցը, այն այդպես էլ չեղավ: Այստեղ հիշեցնենք Արցախի ապագա պետնախարար Ռուբեն Վարդանյանի խոսքերը՝ ասված Համահայկական համաժողովի ժամանակ. «Մենք ունենք ճգնաժամ. 922 օր է մնացել մեզ, եթե ոչ մի բան չանենք, Արցախը կորցնելու ենք»: Սա հենց խաղաղապահների ժամկետին է վերաբերում. հենց այդքան օր անց ռուս խաղաղապահները հեռանալու են Արցախից: Ի դեպ, այսօր խորհրդարան է գալու ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, եւ չնայած թեման բյուջեն է, սակայն, մեր տեղեկություններով, լինելու է նաեւ քաղաքական ելույթ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմիններն այս օրերին լուրջ քննություն են սկսել սեպտեմբերի 13-ին եւ 14-ին սկսված պատերազմի գործողությունների մասով: Քննչական մարմինները լծվել են զորամասերի անձնակազմին հարցաքննելու գործին եւ փորձում են հասկանալ, թե ինչու եւ ինչպես ստացվեց, որ երկու օրվա մեջ հակառակորդն այդքան դիրքային առավելություն ունեցավ: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ առաջիկայում սեպտեմբերի 13-ի եւ 14-ի պատերազմի ընթացքում տեղի ունեցած դեպքերով մեղադրանքների առաջադրման տեղատարափ է լինելու, ասել է թե՝ իրավապահ համակարգը տարածքների կորստի բեռը ջարդելու է զորամասի անձնակազմի «գլխին», թե ով ինչ արեց կամ չարեց հայրենիքը փրկելու համար: Առաջին մեղադրանքն արդեն կա. ՀՀ ՊՆ N զորամասի բուժկետի պետին է մեղադրանք առաջադրվել, որ նա հրաժարվել է պատերազմի ժամանակ զորամասի հրամանատարի հրամանը կատարել:

«Ժողովուրդ» օրաթերթի ձեռքի տակ է հայտնվել փաստաթուղթ՝ ՌԴ տրանսպորտի նախարարության որոշման մասին: Մասնավորապես, լաստանավի տարածքում տրանսպորտային միջոցների մեծ ծանրաբեռնվածության պատճառով եւ անցումները «Կովկաս» նավահանգստում Ղրիմի Հանրապետության ուղղությամբ վերացնելու նպատակով ստեղծվել է լաստանավի վրա բեռնման սպասման հերթ: Այդ որոշմամբ սահմանվելու է այն ապրանքների ցանկը, որոնց տեղափոխումը թույլատրվում է: Այսպիսով, լինելու է Ղրիմի Հանրապետություն բեռնափոխադրումների առաջնահերթություն: Թույլատրվող բեռներն են լինելու փչացող ապրանքներ, երկրորդ տեղում՝ ապրանքներ տեղափոխող տրանսպորտային միջոցներ, դեղագործական արտադրանք: Ընդ որում՝ այն բեռները, որոնք չեն պատկանում նշված ցուցակներին, խորհուրդ է տրվում ուղարկել՝ օգտագործելով երկաթուղային կամ ավտոմոբիլային տրանսպորտ: Հրապարակվել է նաեւ փչացող ապրանքների ցանկը՝ խորը սառեցված եւ սառեցված մթերքներ, այլ փչացող ապրանքներ, արագ փչացող ապրանքներ՝ մրգեր, բանջարեղեն, կաթնամթերք եւ թթու կաթ, սննդամթերք, միս եւ դրա վերամշակման արտադրանք եւ այլ սննդամթերք, որոնք պահանջում են փոխադրման ջերմաստիճանային ռեժիմ: Ի վերջո, ինչ են ենթադրելու այս փոփոխությունները, ինչպես կանդրադառնան Հայաստանի, այստեղ վաճառվող ապրանքների գների վրա: Երեկ «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց այս հարցերի պատասխանները ստանալ ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանից: Վերջինս լրագրողների հետ զրույցից հետո համաձայնել էր պատասխանել նաեւ մեր առանձին հարցերին, սակայն երբ իմացավ, թե մենք որ լրատվամիջոցն ենք ներկայացնում, որոշեց, թե չպետք է պատասխանի, քանի որ արդեն խոսել է: Այդ պահվածքից, ցավոք, ՀՀ ներմուծվող ապրանքների արգելքի խնդիրը չի լուծվում:

ԱՌԱՆՑ ԱԿՆԿԱԼԻՔԻ

ԱՐՑԱԽԸ ԴԻՐՔԵՐԸ ՉԻ ՁԻՋԵԼՈՒ

-Օրերս Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի Վերածննդի հրապարկում տեղի ունեցած բազամահազարոց հանրահավաքը ոչ միայն համայն հայությանը, այլ նաեւ աշխարհին ցույց տվեց, որ Արցախի ադագան առանց արցախցիների տեսակետը լսելու դարգաղես չի կարող որոշվել: Բացի հանրահավաքից, Արցախի խորհրդարանն էլ իր հերթին էր հայտարարություն տարածել, ըստ որի՝ Հայաստանի իշխանությունների ներկայիս դիրքորոշումը, որ Արցախն ինչ-որ կերպով դատկերացնում է Ադրբեջանի կազմի մեջ, մերժելի է: Արցախի իշխանությունները շեշտում են՝ Արցախը որեւէ կարգավիճակով չի՛ կարող Ադրբեջանի կազմում լինել: Արցախցիները շեշտում են նաեւ, որ իրենց անվտանգությունն այս դահին էլ շարունակում է Ռուսաստանից կախված լինել, հետեւաբար ակնկալում են, որ դաշտոնական Մոսկվան իր ներկայությունն այստեղ չի թուլացնի: Իսկ Մոսկվան ազդեցությունը ոչ միայն չի թուլացնում, այլ Սոչիում հերթական եռակողմ հանդիպումն էր կազմակերպել ՀՀ վարչադետի, ՌԴ ու Ադրբեջանի նախագահների մասնակցությամբ: Սոչիում տեղի ունեցած հանդիման ու Արցախի հետագա կարգավիճակի մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արցախի Ազգային ժողովի «Արդարություն» խմբակցության դատգամավոր Մեսրոպ Հակոբյանի հետ:

-Տիկին Հակոբյան, Արցախը միաբերան պնդում է՝ Ադրբեջանի կազմում որեւէ կարգավիճակ քննարկելն անկարելի է: Դուք ինքներդ դա որպես պետական դավաճանություն որակեցիք: Ի՞նչ էր այդ հայտարարությունն ու Վերածննդի հրապարակի հավաքը՝ ճի՞չ, թե՞ ՌԴ-ին ուղղված հստակ «մեսիջ»:

-Այն, ինչ տեղի ունեցավ հոկտեմբերի 30-ին Արցախի Ազգային ժողովում ու Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում, ժողովրդի կողմից հստակ ձեւավորված պահանջներն էին՝ ուղղված բոլոր բանակցողներին ու որոշում կայացնողներին. Հայաստանի Հանրապետությանը, Ռուսաստանի Դաշնությանը, Արեւմուտքին ու բոլոր, բոլորին: Վերածննդի հրապարակում հստակորեն են նշվել այն կարմիր գծերն ու պահանջները, որոնք Արցախում բնակվող ժողովուրդն ունի: Տասնյակ հազարանոց մարդկանց այդ հավաքը մեկ ուղերձ ուներ, այն է՝ ցանկացած փաստաթուղթ, ցանկացած որոշում, որը ստորադասելու է Արցախի ինքնորոշման իրավունքը, կամ դիտարկելու է Արցախի բռնակցումն Ադրբեջանին ցանկացած պայմանով, Արցախում, Արցախի ժողովրդի կողմից չի ընդունվելու: Արցախն իր դիրքերը որեւէ կերպ չի զիջելու, արցախցին որեւէ պարագայում չի նահանջելու: Ինչպես Նիկոլ Փաշինյանն է սիրում ասել, ապա եթե միջազգային հանրությունն, ու, այսպես ասած, միջազգային խաղացողները աչալուրջ լինեին, ապա 21-րդ դարում հայը ցեղասպանության առաջ չէր կանգնի: Այնպես որ, որոշում ընդունելուց առաջ այդ բոլոր որոշումները պետք է հստակ դիտարկվեն հենց այն անկյունից, որ կողմից որ ացախցիներն են ուղղություն տալիս:

-Սոչիում հերթական անգամ հանդիպեցին ՀՀ, ՌԴ ու Ադրբեջանի ղեկավարները: Ի՞նչ կարելի է առանձնացնել այս հանդիպումից: ՌԴ նապագահն ասես հստակ ու ուղիղ ասաց՝ կոնֆլիկտի վերջը պետք է երեւա:

-Սոչիի հանդիպումը առանձնահատուկ էր այն առումով, որ ո՛չ լավ, ո՛չ վատ, ո՛չ հայանպաստ , ո՛չ ի վնաս ՀՀ-ին գնահատականներ տալ չի կարելի: Իմ դիտարկմամբ՝ ընդանուր առմամբ, կարծես թե որեւէ հարցով համաձայնություն չկար: Դա երեւում էր նաեւ 3 նախագահների առանձին-առանձին հրապարակած տեքստերից: Ցավով պետք է նշեմ, որ ամենավատ իրավիճակում կրկին գտնվում էր Հայաստանի Հանրապետության վարչապետը, ում պահվածքից ու տեսքից մի բան կարող ենք արձանագրել, որ այս պահին մենք բանակցող չունենք: Փաշինյանը պարզապես գնում է եւ լսում է՝ ինչ են ասում, ու անգամ այդ խեղճ վիճակում մանեւրում ու փորձում է խորամանկել: Ավելին՝ Ռուսաստանից է պահանջներ ներկայացնում՝ ցույց տալով, որ Մոսկվայում պետք է շատ ավելի հայ լինեն, քան ինքներս ենք: Հայտարարության մեջ «Լեռնային Ղարաբաղ» եզրույթը բացակայում էր, ինչը գործընթացի հետընթացն է նշանակում: Մյուս կողմից կարող ենք դիտարկել, որ կոնֆլիկտը հանգուցալուծված չէ, եւ վերջնական որոշում չկա, իսկ Արցախն այն կարգավիճակում է, որում այժմ ինքը չկա: Կարճ ասած՝ Սոչիի՝ օրերս կայացած հանդիպումից հետո Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ հստակ համաձայնություն չկա, ու ցավով պետք է նշեմ՝ վերջնական որոշման ակնկալիք էլ չունեինք այդ հանդիպումից:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ

ԱՐԳԵԼԵԼՈՒ ՈՉ ՄԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ

Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Ռուստամ Բադասյանի խոսքով՝ թուրքական ադրանքների ներկրումն արգելելու ոչ մի նախագիծ չկա: Նախարարը նման նախաձեռնության անհրաժեշտություն չի տեսնում:

Հարցադրմանը՝ չի կարծում արդյոք, որ Հայաստանի տնտեսությունը կարող է կուլ գնալ թուրքականին, Պետական եկամուտների կոմիտեի նախագահը բացասական պատասխան է տվել:

Նորմալ է արդյոք Թուրքիայի հետ առեւտուր անելը հարցին ի պատասխան՝ նա ասել է. «Առեւտուր անելը նորմալ է»:

Անդրադառնալով ադրբեջանցիների մուտքը Հայաստանի Հանրապետություն ապահովելու՝ վարչապետի հանձնարարականի ուղղությամբ կատարված աշխատանքներին՝Բադասյանը նշել է. «Արվել են բոլոր այն քայլերը, որոնց մասին խոսվել է. դրանք փաստաթղթավորված են, կառավարության որոշումները դրվել են e-draft-ում, ապա՝ ուղարկվել վարչապետի աշխատակազմ, շահագրգիռ երեք գերատեսչություններ: Նշված անցակետերում որոշակի աշխատանքներ եւս իրականացվել են: Սահմանային անցակետերը եւ հսկողության ռեժիմները սահմանված են արդեն»:

Հարցին՝ այս գործընթացները ինչ վտանգներ իրենց հետ կարող են բերել, Պետական եկամուտների կոմիտեի նախագահն ասել է՝ ոչ մի:

«Ի՞նչ վտանգների մասին է խոսքը: Մենք հայտարարել ենք, որ ապաշրջափակման օրակարգը կառավարության համար միանշանակ ընդունելի օրակարգ է, եւ ձեռնարկել ենք դրանից բխող քայլեր:

Գործընթացը, կարելի է ասել, ավարտված է: Եթե մյուս կողմը եւս պատրաստ է օգտվել նման կետերի կողմից մատուցվող ծառայություններից, ապա մենք պատրաստ ենք»:

ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ

«Ռուսաստանը պատրաստ է տրամադրել ամենաճշգրիտ քարտեզները Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ դեմարկացիայի հարցը կարգավորելու համար»,- հայտարարել է Վլադիմիր Պուտինը երեկ՝ Սոչիում Նիկոլ Փաշինյանի ու Իլհամ Ալիեւի հետ բանակցություններից հետո:

Ռուսաստանի նախագահը կրկնել է, որ կողմերի միջեւ խաղաղության պայմանագիր դեռ չկա, եւ որ դրա տարրերի մասին դեռ վաղ է խոսել: Պուտինը միաժամանակ ընդգծել է, որ խաղաղության այդ ապագա համաձայնագիրը պահանջելու է զիջումներ երկու կողմերից, առանց հավելյալ մանրամասների:

Ասուլիսից առաջ Ռուսաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի առաջնորդները մոտ երկու ժամ շարունակված բանակցություններից հետո հերթական եռակողմ հայտարարությունն էին ընդունել: Սակայն ուշագրավ է, որ որեւէ հիշատակում չկա Լեռնային Ղարաբաղի մասին: Բանակցությունների ավարտին Պուտինն ընդունել էր՝ «ամեն ինչ չէ, որ հաջողվել է համաձայնեցնել, որոշ բաներ հեռացվել են մասնագետների կողմից նախապես մշակված տեքստից»:

Նկատենք՝սա 44-օրյա պատերազմից հետո Հայաստանի, Ադրբեջանի ու Ռուսաստանի առաջնորդների միջեւ համաձայնեցված չորրորդ հայտարարությունն է այն դեպքում, երբ նախորդ երեքի մի շարք կետեր, այդ թվում՝ ճանապարհների ապաշրջափակումն ու հայ գերիների վերադարձը, մինչ օրս իրականություն չեն դարձել:

Առաջինը 2020 թվականի նոյեմբերի 9-ին էր, ապա նրանք հանդիպեցին 2021 թվականի հունվարի 11-ին եւ կրկին հայտարարություն ընդունեցին, նախավերջինը նոյեմբերի 26-ին էր կրկին Սոչիում:

ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՎԵՐԱԴԱՐՁ

ՀՀ ֆինանսների նախարարության վերջին տվյալներով՝ 2023թ. անվանական ՀՆԱ-ն կանխատեսվում է 9,3 տրիլիոն, ՀՆԱ-ի իրական աճը՝ 7 տոկոս՝ 2022 թ. համար սպասվող 11 տոկոսի դիմաց. նշել է ՀՀ ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանն ԱԺ տնտեսական հարցերի ու ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում գալիք տարվա բյուջետային գլխավոր փաստաթղթի մանրամասները ներկայացնելիս: Նա անդրադարձել է լրացուցիչ հարկային եկամուտների վրա ազդող տնտեսական, օրենսդրական ու վարչարարական գործոններին:

Անդրադառնալով վիճակագրական տվյալներին՝ Ռուստամ Բադասյանը նշել է, որ ԱԱՀ-ի մասով 2021 թ. հունվար-սեպտեմբերին վերադարձը կազմել է 108,9 մլրդ, 2022 թ. նույն ժամանակահատվածի համար՝ արդեն 139,8 մլրդ դրամ: Եկամտային հարկի վերադարձը 2021 թ. առաջին 9 ամիսներին եղել է 18,1 մլրդ, իսկ 2022 թ.՝30,8 մլրդ դրամ, որից 25,8 մլրդ դրամը հիպոտեկային ծրագրի շահառուներին է վերաբերում: Թեպետ շահառուների շրջանակը սահմանափակվել է, սակայն դեռեւս աճման միտում կա:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՆԻՍՏԸ՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23–ԻՆ

ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նիստը, որտեղ երկրների ղեկավարները կքննարկեն Հայաստանին տրամադրվող օգնությունը, նախատեսված է նոյեմբերի 23-ին Երեւանում. հայտնել են կազմակերպությունից:

«Կայացել է Բելառուսի նախագահի հանդիպումը ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի հետ: Կողմերը քննարկել են կազմակերպության պատասխանատվության շրջանակում ստեղծված իրավիճակը, այդ թվում՝ հոկտեմբերի 28-ին կայացած ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի արտահերթ նստաշրջանի արդյունքները:

Ստանիսլավ Զասը Ալեքսանդր Լուկաշենկոյին տեղեկացրել է նոյեմբերի 23-ին Երեւանում նախատեսվող ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի հերթական նստաշրջանի նախապատրաստման ընթացքի, ինչպես նաեւ Հավաքական անվտանգության խորհրդի մի շարք առանձին հանձնարարականների կատարման մասին»,- սոցիալական ցանցում տեղեկացրել է կազմակերպությունը:

ԼՈՂԱՑՈՂ ՓՈԽԱՐԺԵՔ

Դրամի փոխարժեքը տնտեսությունում տեղի ունեցող գործողությունների հետեւանք է, այսինքն՝ մենք ունենք միջազգային այցելուներ, որոնց՝ Հայաստան ժամանելու արդյունքում ունենք շատ մեծ արտաքին պահանջարկ. իրենք մարում են իրենց մոտ եղած արտարժույթը, ձեռք են բերում դրամ: Այս մասին ասել է ԿԲ նախագահ Մարտին Գալստյանը:

Նրա խոսքով՝ այդ միտումն արտահայտվում է տնտեսության մեջ ծառայությունների, առեւտրի ոլորտների աճով եւ դրամի որոշակի արժեւորման տենդենցներով:

«Այդ մարդիկ, որոնք տեղափոխվել են Հայաստան գործարարությամբ զբաղվելու կամ այլ նպատակով, նրանց ծախսման ուղղությունն արժութային է, իրենք մարում են իրենց մոտ եղած արտարժույթը՝ ձեռք բերելով հայկական դրամ»,-ասաց ԿԲ նախագահը:

Գալստանյանի խոսքով՝ այն իրավիճակում, երբ Հայաստանում առկա է լողացող փոխարժեք, ԿԲ-ն միջամտում է միայն այն դեպքում, երբ զգում է, որ շուկան խեղաթյուրվում է:

Հիշեցնելով, որ ՌԴ-ում սեպտեմբերին մոբիլիզացիա էր հայտարարվել, բանախոսը նկատեց, որ դրա արդյունքում Հայաստանում արտարժույթի հոսքը կրկին ավելացել էր, ինչը ԿԲ-ն չէր կարող անարձագանք թողնել, քանի որ այն իր ազդեցությունն է ունենում նաեւ արժութային շուկայի վրա:

Անդրադառնալով բարձր գնաճին՝ ԿԲ նախագահն ասաց. «Գնաճի դեմ պայքարում ենք մի քանի եղանակներով, որոնցից մեկը տոկոսադրույքն է, երկրորդը՝ փոխարժեքը, դրամի արժեւորումը, որը բնական պրոցես է, օգնում է գնաճը որոշակիորոն զսպելուն»:

ՉԱՓԱԶԱՆՑ ԴՐԱԿԱՆ Է

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՄԱՄԻՆ ԶԵԿՈՒՅՑԸ ՊԵՏՔ Է ՓՈԽՎԻ

Ազգային ժողովի «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցություններն այսօր խորհրդարանում հանդիպել են Եվրախորհրդարանի պատգամավորներին: Հայաստան ժամանած պատվիրակության կազմում էին Եվրոպական խորհրդարանի նիդերլանդացի պատգամավոր, ԵԺԿ քաղաքական խմբի անդամ, Արցախի հետ ԵՄ բարեկամության խմբի համահիմնադիր Պետեր Վան Դալենը, ում հետ էլ հանդիպումից հետո զրուցել ենք Հայաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունների շուրջ:

«Մենք այստեղ ենք մեր համերաշխությունը հայտնելու Հայաստանին եւ Արցախին: Եվ ես իսկապես գոհ չեմ այն էներգետիկ գործարքից, որը կնքվել է նախագահ Ալիեւի հետ: Կարծում եմ՝ հենց դա խրախուսեց Ալիեւին շարունակել իր ագրեսիան: Սա իսկապես կարեւոր պահ է մեզ համար, որ այստեղ ենք, քանի որ Եվրախորհրդարանում մենք գործ ունենք Ադրբեջանի վերաբերյալ զեկույցի հետ, եւ մենք ցանկանում ենք փոխել այն, քանի որ դա չափազանց դրական է: Մենք այստեղ ոչ միայն մեր բարեկամությունն ու համերաշխությունն ենք հայտնելու, այլ նաեւ պետք է դադարեցնենք Ալիեւի ագրեսիան եւ փոխենք այն զեկույցի տոնն ու ձայնը, որն այժմ պատրաստվում է խորհրդարանում», - «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշեց նա:

Հարցին՝ ինչու չի հաջողվում կանգնեցնել Ադրբեջանին, Եվրախորհրդարանի պատգամավորը նկատեց. «Կարծում եմ՝ Ադրբեջանին կանգնեցնելու համար չպետք է արվեր էներգետիկ գործարքը, քանի որ այս էներգետիկ գործարքի պատճառով նա իրեն քաջալերված է զգում շարունակելու իր քաղաքականությունը: Բայց մենք պետք է մեծամասնություն ունենանք Եվրախորհրդարանում՝ Ադրբեջանի դեմ խիստ հայտարարություն անելու, Հայաստանին աջակցելու համար, եւ ես կարծում եմ, որ դրանք քաղաքական միջոցներն են, որ մենք ունենք Եվրոպայում, եւ պետք է Ալիեւը հասկանա, որ Եվրոպան միասնական է»:

Նշենք՝ հանդիպմանը մասնակցում էին նաեւ Ֆաբիո Մասիմո Կաստալդոյը եւ Լարս Պատրիկ Բերգը: «Հայաստան» խմբակցության պատգամավոր Ասպրամ Կրպեյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում չափազանց կարեւոր համարեց նման հանդիպումները, քանի որ եւս մեկ անգամ հնարավորություն է առկա բարձրացնել հարցերը: «Չափազանց կարեւոր հանդիպում էր, եւ հյուրընկալել էինք Հայաստանի ու Արցախի բարեկամներին: Շատ եմ կարեւորում նման հանդիպումները, քանի որ Արցախում եւ Հայաստանում հայ մարդիկ պետք է զգան եւ գործնականում պետք է տեսնեն մեր գործընկերների ու բարեկամների աջակցությունն ու վճռականությունը՝ կանգնելու հայ մարդու կողքին իր արդար եւ շատ ազնիվ պայքարում», - նկատեց նա:

Հավելենք, որ եվրոպական պատվիրակությունը վաղը մեկնելու է Սյունիք տեղում իրավիճակին ծանոթանալու համար: «Չափազանց կարեւորում եմ սա. իրենք պետք է գետնի վրա տեսնեն իրավիճակը, փաստահավաք աշխատանք իրականացնեն, եւ իրենք մեր խոսափողն են եվրոպական խորհրդարանում, եւ սա պետք է հասկանալ շատ լայն իմաստով: Իրենք, առհասարակ, հայ ժողովրդի՝ քաղաքակիրթ աշխարհի հավատամքի, սկզբունքների պաշտպաններն են, եւ այստեղ մենք մեկ նավակում ենք միասին: Այսինքն՝ այն պայքարը, որ հայ ժողովուրդը հիմա մղում է Արցախում ինքնորոշման իրավունքի համար, հենց այս կոնտեքստում պետք է դիտարկել», - հավելեց ընդդիմադիր խմբակցության պատգամավորը:

Նշենք, որ խորհրդարանում Եվրոախորհրդարանի պատվիրակները հանդիպել են նաեւ ՀՀ ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանին, Եվրոպական ինտեգրման հարցերով հանձնաժողովի նախագահին: Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ պատգամավորները քննարկել են հարցերի լայն շրջանակ, անդրադարձել Եվրախորհրդարանում առաջիկայում քննարկվելիք՝ Հայաստանի մասին զեկույցին, ինչպես նաեւ Հայաստան-Եվրոպական միություն կապերի հետագա ընդլայնմանն առնչվող խնդիրներին:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ՝ ԻՐԱՆԻՑ

Վարչապետի Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ նոյեմբերի 1-ին Իրան կատարած այցի շրջանակներում ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը հանդիպել է ԻԻՀ ճանապարհների եւ քաղաքաշինության նախարար Ռոստամ Ղասեմիի հետ:

Հանդիպման ժամանակ քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր: Մասնավորապես, կարեւորել են իրանական ընկերությունների մասնակցությունը Հայաստանում ընթացող շինարարական պրոցեսներին, մրցութային գործընթացներին:

Քննարկել են նաեւ Քաջարանի թունելի կառուցման հարցը: Անդրադարձել են նաեւ Հայաստանում իրականացվող ճանապարհաշինական մեծածավալ աշխատանքներին, ինչն առաջիկայում թույլ կտա մեծացնել Իրանից եկող բեռնափոխադրումների ծավալները: Կարեւորել են ոլորտում համագործակցությունը, կարողությունների հզորացման ուղղությամբ տարվող աշխատանքները:

ՀԱՆՁՆԵԼ Է ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐ

Նախագահ Վահագն Խաչատուրյանին իր հավատարմագրերն է հանձնել Հայաստանի Հանրապետությունում Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Կրում Եֆրեմովը (նստավայրը՝ Կիեւ):

Նախագահ Խաչատուրյանը նշել է, որ չնայած Հայաստանը եւ Հյուսիսային Մակեդոնիան ունեն դիվանագիտական հարաբերությունների կարճ ընթացք, երկու երկրների ժողովուրդները միմյանց շատ լավ են ճանաչում, ունեն բազմաթիվ ընդհանրություններ, նույնանման պատմություն եւ անցել են ծանր փորձությունների միջով: «Մեր պաշտոնական հարաբերությունները մեզ հնարավորություն կտան առավելագույնս օգտագործել երկու պետությունների հնարավորությունները»,- նշել է նախագահը:

Հանդիպմանը երկուստեք կարեւորվել են տարածաշրջանային կայունության եւ երկարատեւ խաղաղության հաստատմանն ուղղված ջանքերը, ընդգծվել, որ խնդրի հանգուցալուծմանը հնարավոր է հասնել բանակցությունների ու դիվանագիտական լուծումների միջոցով:

ԿԱՍԵՑՎԵԼ Է

ԻՆՉՈ՞Ւ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՉԻ ՏԱԼԻՍ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ 2022 թվականի սեպտեմբերի 21-ին «Եռաբլուր»-ում տեղի ունեցած խայտառակ միջադեպի առիթով ծառայողական քննությունը կասեցվել է: Հիշեցնենք, որ «Եռաբլուր» զինվորական դանթեոնում տեղի ունեցած ֆաշիստական առիթով ՀՀ ոստիկանության Ներքին անվտանգության վարչությունում ծառայողական քննություն էր սկսվել:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում գործի կասեցման մասին մեր ունեցած տեղեկությունը հաստատել էր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Արա Ֆիդանյանը: Իսկ ի՞նչն է պատճառը. Քննչական կոմիտեում քրեական գործ կամ վարույթ է հարուցվել, ոստիկանությունը որոշել է Ներքին անվտանգության վարչությունում առկա քննությունը կասեցնել մինչեւ այդ քրեական գործի ավարտը, այսինքն՝ Քննչական կոմիտեի քննության ավարտից հետո ոստիկանության ղեկավարությունը իր համապատասխան քայլերը կիրականացնի:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ միջադեպից միայն մի քանի օր անց հարուցված քրեական գործով մինչեւ օրս որեւէ ոստիկան կամ հրաման տվող սպա պատասխանատվության չի ենթարկվել: Նշենք, որ կան ծնողներ, որոնց մարմնական վնասվածքներ ստանալու փաստը փորձաքննությամբ հաստատված է, ծնողները տուժող են ճանաչվել, սակայն ոչ ոք պատասխանատվություն չի կրել առ այսօր: Թերեւս չի էլ լինի պատիժ, քանի որ այդ ծեծն ակնհայտորեն ուներ քաղաքական հրահանգ: Իսկ չի՞ պատրաստվում հրաժարական տալ ՀՀ ոստիկանապետ Վահե Ղազարյանը, քանի որ մի շարք հասարակական կազմակերպություններ պահանջել էին նրա հրաժարականը: Եթե ոչ, ապա ինչո՞ւ. այս հարցի պատասխանը անձամբ փորձեցինք ստանալ փոխոստիկանապետ Արա Ֆիդանյանից:

-Ինչո՞ւ ՀՀ ոստիկանապետը հրաժարական չի տալիս. չէ՞ որ «Եռաբլուր»-ի միջադեպից հետո պահանջում էին նրա հրաժարականը, եւ եթե չի հրաժարվում, կխնդրեմ մեկնաբանել՝ ինչու:

-Ըստ էության հասարակական ընկերությունների պահանջը նախ պետք է հիմնավոր լինի:

-Մի՞թե «Եռաբլուր»-ի միջադեպը հիմնավոր չէր:

-Այդ միջադեպի գործով իրականացվում է վարույթ: Վարույթը իրականացվում է բանականաբար ոչ ոստիկանության կողմից

-Ներքին անվտանգության ծառայությունում նախաքննություն է իրականացվում, որը կարող են համարել նախաքննական գաղտնիք, բայց ոստիկանության Ներքին անվտանգության ծառայությունում եւս նախաքննություն է, եւ մեկ ամիս է, ինչ հանրությունը տեղյակ չի՝ ոստիկանության որ պաշտոնյայի հրահանգով է ծնողների նկատմամբ նման վարք դրսեւորվել:

-Ներքին անվտանգության վարչության կողմից իրականացվող յուրաքանչյուր ուսումնասիրություն կասեցվում է, եթե առկա է քրեական վարույթ. տվյալ դեպքով եւս բացառություն չէ: Քրեական վարույթի ավարտից հետո, վստահեցնում եմ, պարզ կլինեն բոլոր հանգամանքները, եթե այնտեղ եղել է մեղավորություն եւ ում կողմից: Քրեական վարույթն է, որ պետք է պարզի մեղավորներին ցանկացած պարագայում:

-Նմանօրինակ դեպքերում մինչ օրս ոչ մի ոստիկան պատասխան չի տվել: Եթե ոստիկանության համար ցանկալի իրավիճակ չէ, ապա ոչ ոք պատասխան չի տալիս: Հետաքրքիր է Ձեր կարծիքը այս մասին:

-Չեմ համաձայնի բնականաբար Ձեր տվյալ պնդման հետ, քանի որ մենք տարվա կտրվածքով ունենք 1300-ին մոտ ծառայողական քննություններ: Մեծ թվով ոստիկանության աշխատողներ ունենք, որոնք ենթարկվել են տարբեր կարգապահական պատասխանատվությունների: Այս տարի 42 աշխատակից ազատվել է ոստիկանության ծառայությունից, որտեղ գտնվում են այն աշխատողները, որոնք կատարել են տարբեր իրավախախտումներ:

Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՔՆՆԱՐԿՎԵԼ Է

ՎՆԱՍՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՐՑ

Քրեական գործերով մինչդատական վարույթի փուլում պետությանը եւ համայնքներին պատճառված վնասի վերականգնման նպատակով վճարումները պետք է կատարվեն մեկ միասնական գանձապետական հաշվեհամարին: Այս մասին հայտարարել է ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը երեկ՝ այս նպատակով ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի առաջին հանդիպման ժամանակ:

Հանդիպմանը մասնակցել են Դատախազության, Հակակոռուպցիոն կոմիտեի, Ազգային անվտանգության ծառայության, Պետական եկամուտների կոմիտեի, ինչպես նաեւ Քննչական կոմիտեի ներկայացուցիչները:

Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը ողջունել է հանդիպման մասնակիցներին եւ տեղեկացրել, որ աշխատանքային խումբը մինչեւ տարեվերջ վարչապետի աշխատակազմ պետք է ներկայացնի պետությանը եւ համայնքներին պատճառված վնասի վերականգնման մեկ միասնական գանձապետական հաշվեհամար ունենալու գործընթացի կազմակերպման մասին եզրակացություն՝ ֆինանսական եւ իրավական բաղադրիչներով: «Հարցը շատ կարեւոր է. բոլորս պետք է շահագրգռված լինենք, որ օր առաջ ստեղծենք միասնական հաշիվ, որպեսզի, ինչպես ՀՀ վարչապետն է բազմիցս նշել, ամեն տարի ունենանք պետությանը պատճառված վնասի վերականգնման հանրագումար, այն արտացոլվի նաեւ պետական բյուջեի եկամուտների մեջ»,- ընդգծել է Աննա Վարդապետյանը:

Գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական եւ իրավական ապահովման վարչության պետ Արմեն Մարուխյանը աշխատանքային խմբին է ներկայացրել պետությանը եւ համայնքներին պատճառված վնասի վերականգնման գործող կարգավորումների կապակցությամբ իրականացված ուսումնասիրության արդյունքներն ու գույքագրված խնդիրները, որոնք խոչընդոտում են վերականգնված գումարները տնօրինելիս եւ հաշվառելիս:

Մասնավորապես, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ իրավասու մարմիններում քննվող քրեական վարույթներով պետությանը կամ համայնքներին պատճառված վնասը վերականգնվում է տարբեր նախաքննական մարմինների կամ դատախազության դեպոզիտային, պետությանը պատճառված վնասի վերականգնման եւ ՊԵԿ միասնական հաշվեհամարներին: «Որոշ դեպքերում պատճառված վնասը վերականգնվում է այն կազմակերպության հաշվեհամարին, որին հանցագործությամբ պատճառվել է վնասը, իսկ հաճախ մեկ նախաքննական մարմնում քննվող քրեական վարույթով պատճառված վնասը վերականգնվում է մեկ այլ նախաքննական մարմնի դեպոզիտային հաշվին»,- տեղեկացրել է վարչության պետը:

Հանդիպման ընթացքում պետական մարմինների ներկայացուցիչներն անդրադարձել են պետությանը եւ համայնքներին պատճառված վնասի վերականգնման արդյունավետ մեխանիզմ ներդնելու, դրան զուգահեռ՝ տարիների ընթացքում տարբեր պետական մարմիններին այդ նպատակով փոխանցված գումարների գույքագրում սկսելու հարցերին, տրվել են նաեւ հանձնարարականներ, սահմանվել են ժամկետներ:

Աշխատանքային խմբի հանդիպումները կրելու են շարունակական բնույթ՝ ապահովելու համար վարչապետի որոշմամբ սահմանված վերջնաժամկետի պահպանումը:

ԼՈՒՐԵՐ

ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԴՐՎԵԼ

Այս տարվա սեպտեմբերի 13-ին սկսված պատերազմի ընթացքում ուշագրավ դեպքեր են եղել, ինչի արդյունքում իրավապահները հարուցել են քրեական գործ: Այսպիսով, ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Իրինա Բալայանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ՀՀ ԶՈՒԳԾ պետի 2021 թվականի օգոստոսի 25-հրամանով հանդիսացել է ՀՀ ՊՆ N զորամասի 1-ին հրաձգային գումարտակի բուժկետի պետ-բուժակ, կոչումով սերժանտ, նույն զորամասում 2022 թվականի սեպտեմբերի 14-ին հրաժարվել է զինվորական ծառայություն իրականացնել եւ ՀՀ ՊՆ N զորամասի հրամանատարի հրամանով սահմանված Ջերմուկի մատույցներում պաշտպանության անցնելու պարտականությունները կատարելուց, որը զուգորդվել է դրանց չկատարմամբ: Նա մեղադրյալի աթոռին է, եւ նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել երկրից չբացակայելու արգելքը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԶԻՆԾԱՌԱՅՈՂԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ինն երորդ կայազորային քննչական բաժնում շարունակվում է պահեստազորային շարքային զինծառայողի կողմից ծառայակցի սպանության եւ իր առողջությանը վնաս պատճառելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ պահեստազորային զինծառայող շարքայինին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի (Սպանությունը) 1-ին մասով եւ 528-րդ հոդվածի (Առողջությանը վնաս պատճառելը (անդամախեղելը), որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն) 1-ին մասով, եւ որպես խափանման միջոց վերջինիս նկատմամբ կիրառվել է կալանավորումը:

Ավելի վաղ տեղեկացրել էինք, որ 2022թ. հոկտեմբերի 29-ին ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքում պահեստազորային զինծառայող շարքայինը վիճաբանել էր համածառայակից պահեստային զինծառայող Միսակ Պետրոսյանի հետ, որի ընթացքում ինքնաձիգից կրակահերթ էր արձակել եւ վերջինիս գլխի շրջանում պատճառել մահացու հրազենային վնասվածք, որից հետո կրակել էր նաեւ իր ոտքին՝ պատճառելով հրազենային վիրավորում: Նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 27-ից 28-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 33 դեպք, որոնցից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՁՄԵՌԱՆԸ

ՀՀ միջպետական եւ հանրապետական նշանակության ավտոճանապարհները սպասարկող կազմակերպությունները պատրաստվում են ձմեռային սպասարկման աշխատանքներին: Նոյեմբերի 15-ին կմեկնարկի միջպետական եւ հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային սպասարկումը... որը կշարունակվի մինչեւ մարտի 31-ը:

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամից հայտնում են, որ հիմնադրամի ճանապարհների պահպանման ու շահագործման բաժնի մասնագետներն այս օրերին գործուղվում են տարբեր ուղղություններով՝ հետեւելու 38 սպասարկող կազմակերպությունների նախապատրաստական աշխատանքներին՝ աղ-ավազի պաշարների կուտակմանը, պահանջվող մեքենա-մեխանիզմների տեխնիկական վիճակին եւ այլն:

Նոյեմբերի 16-ից «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամում կսահմանվի նաեւ շուրջօրյա հերթապահություն, որի ընթացքում 24-ժամյա տեղեկատվություն կհավաքվի Հայաստանի միջպետական եւ հանրապետական նշանակության ավտոճանապարհների անցանելիության վերաբերյալ՝ այդ մասին ծանուցելով հանրությանը:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

2023 թ. կառույցի համար նախատեսվել է շուրջ 4 մլրդ 418 մլն դրամ. ԱԺ տնտեսական ու ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում, ներկայացնելով կառույցի բյուջետային ծրագրերը, ասել է ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանը:

Ըստ նրա՝ նշված գումարի շրջանակում նախատեսվում է իրականացնել «Անշարժ գույքի կադաստրի վարման բնագավառում պետական քաղաքականության իրականացում» ծրագիրը, որի նպատակն է անշարժ գույքի պետական միասնական կադաստրի համակարգի զարգացումը, պետության կողմից անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ճանաչումը, երաշխավորումը եւ պաշտպանությունը:

Գեոդեզիայի ու քարտեզագրության բնագավառի զարգացման նպատակով նախատեսվում է շարունակել երկրատեղեկատվական համակարգում բնակավայրերի քարտեզագրական հենքի ստեղծման աշխատանքները, օրթոֆոտոհատակագծերով ամբողջությամբ ծածկված համայնքների ճշգրտված կադաստրային թաղամասերի հատակագծերը, համայնքների կադաստրային թաղամասերի ուղղման նպատակով լրացուցիչ կետերի դիտարկման եւ թաղամասերի արտաքին սահմանների ամբողջական ուղղման աշխատանքները:

ՀԱՆԴԻՊԵՑԻՆ

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԹԻՄԸ՝ ՎԱՐԴԵՆԻՍՈՒՄ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը Վարդենիսի համայնքապետարանում հանդիպեց ԵՄ առաքելության դիտորդական թիմին, որը ղեկավարում էր առաքելության ղեկավարի տեղակալ Էսբեն Ռիս Պետերսոնը: Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից, հանդիպմանը ներկա էին նաեւ ՀՀ ԶՈՒ բանակային երկրորդ կորպուսի հրամանատար, գնդապետ Վահրամ Գրիգորյանը, Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը, զինվորականներ:

Էսբեն Ռիս Պետերսոնը հանդիպման սկզբում տեղեկացրել է, որ Եվրամիության դիտորդների՝ Գեղարքունիքի մարզում գործունեություն իրականացնող թիմի նպատակն է պարեկություն իրականացնել հայ-ադրբեջանական սահմանի Գեղարքունիքի հատվածից: Առաքելությունը կհետեւի սահմանի հայկական կողմում տիրող իրավիճակին՝ վստահություն ձեւավորելու եւ սահմանային հանձնաժողովներին աջակցելու համար:

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը ողջունել է ԵՄ առաքելության դիտորդների այցը Գեղարքունիքի մարզ, ապա հանգամանալից ներկայացրել 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ին Ադրբեջանի կողմից սանձազերծած ագրեսիայի հետեւանքով Վարդենիսի բնակավայրերում ստեղծված իրավիճակի մասին, որն առնչվում էր տարհանված բնակչության վերադարձին, գյուղատնտեսական աշխատանքների անբավարար ընթացքին, վնասված շենք-շինություններին, ենթակառուցվածքներին, դպրոցներին, նախադպրոցական հաստատություններին, քաղաքացիական այլ կառույցներին եւ այդ ուղղությամբ պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ձեռնարկվող ու իրականացվող միջոցառումներին:

Մարզպետը հույս է հայտնել, որ ԵՄ դիտորդների մուտքը մարզ հնարավորություն կտա ավելի օբյեկտիվ գնահատել առկա իրավիճակը եւ նպաստել խնդիրների խաղաղ կարգավորմանը:

Գեղարքունիքի մարզի սահմանային տարբեր հատվածներում թշնամու սանձազերծած ագրեսիայի եւ դրա հետեւանքով ստեղծված իրավիճակի մասին ԵՄ առաքելության դիտորդներին տեղեկատվություն է ներկայացրել նաեւ ՀՀ ԶՈՒ բանակային երկրորդ կորպուսի հրամանատար Վահրամ Գրիգորյանը:

Հայկական կողմի ներկայացուցիչները պատասխանել են դիտորդներին հետաքրքրող տարատեսակ հարցերի: Վերջիններս իրենց գոհունակությունն են հայտնել Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանին եւ երկրորդ բանակային կորպուսի հրամանատար Վահրամ Գրիգորյանին՝ նման քննարկում ծավալելու, բովանդակալից եւ հագեցած տեղեկատվություն ներկայացնելու համար:

Այնուհետ Գեղարքունիքի մարզպետի, երկրորդ բանակային կորպուսի հրամանատարի եւ Վարդենիս համայնքի ղեկավարի ուղեկցությամբ ԵՄ առաքելության դիտորդական խումբն այցելել է հակառակորդի հրետակոծությունից տուժած Կուտական, Սոթք եւ Կութ բնակավայրեր՝ տեղում դիտարկելու եւ արձանագրելու առկա վիճակը, իրենց հետագա գործունեության ուղղությունները նախատեսելու նպատակով:

ՄԱՐՔ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԼԻՆԵԼԸ ՆՇՎԱԾ ՉԷ

Հոկտեմբերի 29-ին կայացած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 6-րդ համաժողովում իշխող կուսակցության վերահսկիչ հանձնաժողով է ընտրվել, որի անդամների թվում է Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի հարսանիքի քավոր, նրա դասընկեր, Նիկոլ Փաշինյանի կողմից 2019թ. սեպտեմբերի 12-ին՝ Իջեւան համայնքի ղեկավարի պաշտոնակատար, 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանի կենսագրության մեջ, որը հրապարակված է Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում, նշում չկա նրա կուսակցական պատկանելիության մասին:

ԴՌՆԵՐԸ ԲԱՑԵԼ ԵՆ

Պառավաքարի միջնակարգ դպրոցի տնօրեն Նաիրա Ղայթմազյանը նոր ուսումնական տարվա սկզբից՝ սեպտեմբերի 1-ից՝ ամեն օր՝ առավոտյան ժամը 9-ից, փակել է տալիս դպրոցի դռները, եւ բոլոր ուշացած աշակերտները հնարավորություն չեն ունենում մասնակցելու դասերին: «Ժողովուրդ» օրաթերթը Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին գրավոր հարցում է ուղարկել՝ հարցնելով՝ դպրոցի տնօրեն Ն. Ղայթմազյանի այդ գործողությունը օրինական է, թե անօրինական: Մարզպետի գրավոր պատասխանում նշված է, որ դպրոցի ծնողխորհուրդների նախագահների առաջարկությունը հաշվի է առնվել, «Պառավաքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում առավոտյան ժամը 9:00-ին ժամանակավորապես փակվել է մուտքի դուռը մինչեւ 1-ին դասաժամի ավարտը, չի թույլատրվել աշակերտների մուտքը դպրոց, որոշումը կայացվել է մանկավարժական եւ ծնողական խորհուրդների նիստերում աշակերտների ուշացումները կանխելու եւ կարգապահությունը բարձրացնելու նպատակով: Պառավաքարի դպրոցից հայտնում են, ուշացած, դպրոցի դռների փակ լինելու պատճառով առաջին դասաժամին չմասնակցած աշակերտներին դպրոցի տնօրինությունը համարում է ամբողջ օրը դասերից բացակայած: Պառավաքարի դպրոցի ծնողխորդի անդամ Գոհար Ալավերդյանը հայտնում է Պառավաքարի դպրոցում կատարվող անթույլատրելի երեւույթների մասին. «ՀՀ տարածքում այդքան դպրոցներից կարո՞ղ եք նշել այնպիսի մեկը, որտեղ բռնանում են աշակերտների ազատությանը. ո՞ր դպրոցում են աշակերտները ջուր խմում զուգարանի ծորակից, ո՞ր կրթական հաստատությունում են աշակերտի առաջ դուռ փակում, ո՞ր դպրոցում են ուսուցչին ազատում աշխատանքից՝ պատճառաբանելով, թե թափուր հաստիք չկա, բայց ամիսներ անց նույն մասնագիտությամբ հեռակա սովորած այլ աշխատողի ընդունում աշխատանքի: Պատճառը հաստիք չլինելը չէ, այլ այն, որ աշխատողը ներկայիս տնօրենի համախոհը չի եղել ու չի սատարել նրան տնօրենի ընտրության ժամանակ: Կարող եմ փաստել, որ այս ամենը գալիս է իրենց սեփական շահից: Երեխա եք կրթում, դաստիարակում, որ վաղը, երբ գա աշխատանք խնդրի իր սեփական դպրոցից, հեռացնե՞ք»: Պառավաքարի դպրոցից հայտնեցին, որ դպրոցական աշնանային արձակուրդների ավարտից հետո՝ հոկտեմբերի 31-ին, Պառավաքարի դպրոցի տնօրեն Նաիրա Ղայթմազյանը չի կարգադրել առավոտյան ժամը 9-ից փակել դպրոցի մուտքի դռները: Դպրոցում կատարվող այդ ապօրինության վերաբերյալ մեր հրապարակում-քննադատությունը դրական արդյունք է տվել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 20-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԱՃՈՒՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին

2022թ. նոյեմբերի 22-ին՝ ժամը 12:00-ին, պարտապան Տաթեւիկ Անտոնյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց պող. 5, 311 սենյակ հասցեում կանցկացվի «Արդշինբանկ» ՓԲԸ-ում գրավադրված եւ սեփականության իրավունքով Տաթեւիկ Անտոնյանին պատկանող գույքի աճուրդը՝ 1 ԼՈՏ 4 ենթալոտով, բաց դասական եղանակով:

Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ 1, ենթալոտ 1. ոսկյա խաչ 1 հատ, իրի զանգվածը 5.3 գրամ է, հարգը՝580: Մեկնարկային գինը կազմում է 62,300 ՀՀ դրամ:

ԼՈՏ 1, ենթալոտ 2. ոսկյա շղթա 5 հատ, իրերի զանգվածը 166.4 գրամ է, հարգը՝580: Մեկնարկային գինը կազմում է 2,029,400 ՀՀ դրամ:

ԼՈՏ 1, ենթալոտ 3. ոսկյա թեւնոց 1 հատ, իրի զանգվածը 6.8 գրամ է, հարգը՝580: Մեկնարկային գինը կազմում է 80,900 ՀՀ դրամ:

ԼՈՏ 1, ենթալոտ 4. ոսկյա կուլոն 1 հատ, իրի զանգվածը 1.6 գրամ է, հարգը՝580: Մեկնարկային գինը կազմում է 18,700 ՀՀ դրամ:

ԼՈՏ 1 ընդհանուր մեկնարկային գինը կազմում է 2,191,300 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

-ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը,

-աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթեր:

Մասնակցության վճարը եւ նախավճարը կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1% եւ 5%-ը:

Աճուրդի մասնակցության վճարը եւ նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Տաթեւիկ Անտոնյանի սնանկության հաշվին՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի «Նոր Արեշ» մասնաճյուղ 1150013659529516 հաշվեհամարին, մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն, կարող են հայտ ներկայացնել ՀՀ Սնանկության դատարան /ք. Երեւան. Օտյան 53/2:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով. հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ՝ դիմելով կառավարիչ՝ Ա. Էլոյանին /094 411 487/:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» 4

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԱՎԱՆԳԱՐԴՈՒՄ

«Ամերիաբանկ»-ի ֆինանսական տնօրեն Հովհաննես Թորոյանն հարցազրույց է տվել Global Markets ամսագրին՝ ներկայացնելով բանկի ռազմավարությունն ու հիմնական գործոնները, որոնք աղահովել են «Ամերիաբանկ»-ի հաջողությունը Հայաստանի բանկային համակարգում:



Հարցազրույցն ամբողջությամբ հասանելի է ստորեւ:

-Որո՞նք էին ձեր բանկի ռազմավարական հիմնական ուղղությունները նախորդ տարվա ընթացքում:

-«Ամերիաբանկ»-ը Հայաստանում առաջատար ֆինանսական հաստատություն է արդեն գրեթե մեկ տասնամյակ: Թեեւ 2022 թվականին համաշխարհային տնտեսության համար սկսվեց անորոշության հերթական փուլը, մենք կարողացանք պահպանել եւ ավելի ամրապնդել մեր դիրքերը՝ վերահաստատելով կայուն, ժամանակակից, մրցունակ եւ աճի զգալի ներուժ ունեցող ֆինանսական հաստատության համբավը:

Վերջին վեց ամսվա ընթացքում հիմնական շեշտը դրվեց թվային փոխակերպման, համապատասխանության գործառույթի ապահովման եւ ռիսկերի կառավարման վրա, որոնք մենք համարում ենք մեր հետագա աճի հիմնական շարժիչ ուժը:

-Անդրադառնալով ձեր բանկի նախորդ տարվա ֆինանսական ցուցանիշներին՝ կարո՞ղ եք նշել կարեւորագույն կետերից մի քանիսը:

-«Ամերիաբանկ»-ը ֆինանսական ցուցանիշերի, ինչպես նաեւ նոր ծառայությունների ու տեխնոլոգիաների մշակման ուղղությամբ հատկանշական ձեռքբերումներ է ունեցել: Նախորդ տարվա ընթացքում մենք շարունակաբար ներդրումներ կատարեցինք թվայնացման ուղղությամբ, բարելավեցինք մեր հաճախորդների բավարարվածության ցուցանիշերը, ներքին արդյունավետությունը, արդիականացրինք մեր ծառայությունները եւ պարզեցրինք մեր գործընթացները: Կարողացանք պահպանել բանկի ծախսերի եւ եկամուտների հարաբերակցության 40%-ից ցածր ցուցանիշը: Բանկը գրանցեց շահութաբերության տպավորիչ ցուցանիշեր կապիտալի եւ իրացվելիության ամուր դիրքերով: Կապիտալի տարեկան եկամտաբերությունը կազմեց 28%, զուտ տոկոսային մարժան՝ 5.4%: Բացի այդ, բանկը գրանցեց ոչ տոկոսային եկամուտի տպավորիչ աճ: Համաձայն մեր ռազմավարության՝ մանրածախ եւ ՓՄՁ վարկերը կազմեցին ընդհանուր վարկերի ավելի քան 60%-ը:

Մանրածախ պորտֆելի բաղադրյալ միջին տարեկան աճի տեմպը եռամյա կտրվածքով կազմեց 30%, իսկ ՓՄՁ վարկերինը՝ 17,2%: Բանկը պահպանեց եւ շարունակեց ռիսկերի կառավարման ոլորտում իր կայուն քաղաքականությունը: Խնդրահարույց վարկերի ցուցանիշը շարունակաբար բարելավվեց բոլոր ուղղություններով՝ 2022 թվականին կազմելով 2,9%: Նախորդ երկու տարվա ընթացքում պատշաճ պահուստավորման շնորհիվ վարկային ռիսկի արժեքը կազմեց շուրջ 0%: Միեւնույն ժամանակ «Ամերիաբանկ»-ն ապահովեց սպասարկման գերազանց որակ: Այդ մասին են վկայում հաճախորդների հավատարմության ցուցանիշը (NPS), որը կազմեց ավելի քան 75%, եւ հաճախորդների բավարարվածության ցուցանիշը՝ 9.5 միավոր 10 միավորից:

-Ձեր ընկերության ո՞ր զարգացող ուղղություններում եք ներդրումներ կատարել եւ նախատեսո՞ւմ եք արդյոք շարունակել ներդրումները:

-Որպես բանկ, որը կանգնած է եղել Հայաստանի բանկային ոլորտի կայացման եւ դրա փոխակերպման ակունքներում, «Ամերիաբանկ»-ը շարունակում է ներդրումներ կատարել տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) եւ թվայնացման ոլորտում՝ հավատարիմ մնալով իր ռազմավարական առաջնահերթություններին: Հաշվի առնելով հաճախորդների աճի ցուցանիշերը՝ մենք նախատեսում ենք կենտրոնացնել մեր ուժերը ծառայությունների եւ առաջարկների խաչաձեւ վաճառքի, ինչպես նաեւ հաճախորդներին ավելի նորարար ծառայություններ առաջարկելու ուղղությամբ: Միեւնույն ժամանակ, մշակվում են մի շարք գործողություններ, որոնք ուղղված են տնտեսության առանձին հատվածներում նոր հնարավորությունների բացահայտմանը, հատկապես այնպիսի հնարավորությունների, որոնք կնպաստեն նաեւ բանկային գործարքների եւ ոչ տոկոսային եկամուտի աճին: Կարեւոր է նշել, որ բանկի բոլոր գործարքների 90%-ից ավելին իրականացվում է բանկի մասնաճյուղերից դուրս:

Եվ վերջապես մենք կշարունակենք ընդլայնել եւ զարգացնել մարդկային կապիտալը, ինչպես նաեւ բարելավել աշխատանքի արդյունավետությունն ու աշխատակիցների մոտիվացիան ակտիվ դասընթացների եւ վերապատրաստումների միջոցով:

-Շրջակա միջավայրի, սոցիալական եւ կորպորատիվ կառավարման ասպեկտները եւ կայունությունը բանկային ոլորտի կարեւորագույն ռազմավարական ուղղություններից են: Ինչպիսի՞ էական նախաձեռնություններով է հանդես եկել Ձեր բանկը նախորդ տարվա ընթացքում, որոնք ցույց են տալիս, թե որքան կարեւոր են նշված ասպեկտները եւ կայունությունը ձեր հաստատության համար:

-Որպես Հայաստանի ֆինանսական համակարգի առաջատար՝ «Ամերիաբանկ»-ը գիտակցում է առանցքային դեր ունենալու իր պատասխանատվությունը երկրի կայուն ապագա կառուցելու գործում: Մենք գիտակցում ենք, որ կլիմայի փոփոխությունը եւ բնապահպանական նմանատիպ ռիսկերն այսօրվա հասարակության գլխավոր մարտահրավերներից են: Դրանք ստեղծում են բնապահպանական, տնտեսական եւ սոցիալական էական ռիսկեր, որոնք խոչընդոտում են երկարաժամկետ աճն ու զարգացումը:

Մենք աջակցում ենք ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) իրագործմանը եւ դրա շրջանակում ֆինանսավորում ենք վերականգնվող էներգիայի, էներգաարդյունավետության, մաքուր էլեկտրաէներգիայի հասանելիության, «կանաչ» տրանսպորտի եւ տեխնոլոգիաների զարգացման ոլորտում կատարվող ներդրումները՝ այդպիսով տարբեր նախագծերի միջոցով աջակցելով նաեւ զարգացման ցածր մակարդակ ունեցող համայնքներին: 2009թ.-ից ի վեր «Ամերիաբանկ»-ը տարբեր միջազգային ֆինանսական հաստատությունների աջակցությամբ նման ծրագրերի ֆինանսավորմանն է ուղղել ավելի քան 250 մլն ԱՄՆ դոլար:

«Ամերիաբանկ»-ը Հայաստանում կանաչ պարտատոմսեր թողարկող առաջին բանկն է եւ այս ոլորտի առաջատարը: 2020 թվականից ի վեր մենք թողարկել ենք ավելի քան 60 միլիոն ԱՄՆ դոլարի կանաչ պարտատոմս:

-Բանկերի միջեւ թեժ մրցակցություն է նորարարական թվային բանկային ծառայությունների մշակման ու ներդրման ոլորտում: Ի՞նչ նոր եւ նշանակալի ներդրում է կատարել ձեր բանկը թվային բանկային ծառայությունների ոլորտում նախորդ տարի եւ ի՞նչ հաջողություն է գրանցել:

-Թվային ոլորտում սպառողների վարքագծի սրընթաց փոխակերպման ֆոնին մենք կարողացել ենք խոստումնալից արդյունքներ ապահովել մեր ծառայությունների դիվերսիֆիկացման եւ թվայնացման ուղղությամբ: Պատասխանատվություն, ճկունություն, նորարարական մտածելակերպ եւ մշակույթ, որի հիմքում հաճախորդների կարիքները բավարարելու ցանկությունն է. այս ամենը կազմում է թվային փոխակերպման հաջողության բանաձեւը:

Այս համատեքստում նախորդ երկու տարին ուշագրավ էր համապարփակ թվային էկոհամակարգի մշակման եւ գործարկման առումով: Շուկայում իր տեսակի մեջ առաջինը համարվող այս գործիքը բանկային եւ ոչ բանկային ծառայությունները միավորող մեկ համակարգ է, որն ընդգրկում է ավտոմեքենաների շուկան, հիփոթեքային շուկան, էլեկտրոնային առեւտուրը, ինչպես նաեւ եզակի էկոհամակարգ ՓՄՁ-ների համար՝ վարկային հայտերի առցանց ներկայացման եւ մեքենայական ուսուցման վրա հիմնված վարկունակության գնահատման առաջադեմ հնարավորություններով:

-Համաշխարհային տնտեսության հեռանկարը բազմաթիվ մարտահրավերներ է պարունակում: Որո՞նք են այն հիմնական ռիսկերը եւ տնտեսական մարտահրավերները, որոնց ձեր բանկը կարող է հանդիպել առաջիկա 12 ամսվա ընթացքում:

-Հայաստանն այս տարի զգալի տնտեսական աճ է գրանցել, սակայն դեռեւս կան բազմաթիվ անորոշություններ, տեղի են ունենում փոփոխություններ, տնտեսության որոշակի ճյուղեր փոխակերպվում են, համաշխարհային մատակարարման շղթաներում տեղի են ունենում տեղաշարժեր, որոնք դեռ նոր պետք է իրենց ազդեցությունն ունենան երկրի տնտեսության վրա:

Թեեւ նշված անորոշությունները դժվարացնում են երկրի առաջատար ֆինանսական հաստատության կառավարումը, թվարկված մարտահրավերները նաեւ բազմաթիվ հնարավորություններ են ստեղծում: Տոկոսադրույքների ակնկալվող աճի, ռիսկի որոշակի պարամետրերի վատթարացման, կլիմայի փոփոխություններին առնչվող գործողությունների անհրաժեշտության աճի եւ մեր հաճախորդների շրջանում թվային գաջեթներից կախվածության աճի պայմաններում «Ամերիաբանկ»-ը կշարունակի կենտրոնանալ տվյալահեն թվային փոխակերպման, ռիսկերի պատշաճ կառավարման եւ շրջակա միջավայրի, սոցիալական ու կորպորատիվ կառավարման ուղղությունների ընդլայնման վրա՝ հասնելու մեր առաքելության իրականացմանը, այն է՝ բարելավել մարդկանց կյանքի որակը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՆՈՐ ՊՐԵՄԻԵՐԱ

ԵՐԳ՝ ՓՈՔՐԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դերասանուհի, երգչուհի Լիլիթ Բադանյանը եւ փոքրիկ երգչուհի Իլոնան երեկ իրենց երկրպագուներին ներկայացրել են նոր ու վառ երգի տեսահոլովակ: Այն կոչվում է «Barbie տիկնիկներ»: ArmLur.am-ի հետ զրույցում Լիլիթն առաջին անգամ պատմել է տեսահոլովակի գաղափարի, երգի ընտրության եւ փոքրիկ Իլոնայի հետ համագործակցության մասին:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«Առաջին անգամ եմ նման երգով հանդես գալիս, չնայած որ ինձ համար մի քիչ խորթ էր, բայց նաեւ շատ հաճելի: Սա ինձ համար կոնկրետ նորություն էր, քանի որ նախկինում երբեք նման աշխատանք չեմ ունեցել: Նման վառ ու լուսավոր երգ ստեղծելու գաղափարը եղել է իմ փոքրիկ կոլեգայի՝ Իլոնայի ծնողներինը: Իրականում երգի ստեղծման ընթացքը շատ հետաքրքիր է եղել եւ միեւնույն ժամանակ շատ պարտավորեցնող այն առումով, որ երգը առաջինը պետք է սիրեն եւ գնահատեն երեխաները: Ինձ հետ երգող աղջնակը դեռ 6 տարեկան էլ չկա, ու պետք է ասեմ, որ իր տարիքի համար շատ պատրաստակամ է ու շատ պրոֆեսիոնալ ձեւով է մոտենում գործին»,-նշեց Լիլիթը:

Լիլիթ Բադանյանի խոսքով՝ երգի տեսահոլովակը նկարահանվել է ամռանը, սակայն Հայաստանում սահմանային լարված իրավիճակով պայմանավորված՝ պրեմիերան հետաձգվեց. «Ինչպես նկատում եք, տեսահոլովակը նկարահանվել է ամռանը, սակայն երկրում կատարվող սահմանային լարված իրավիճակը մեզ ստիպեց այն հետաձգել: Երգը փոքրիկների համար է, եւ կարծում եմ՝ մեր փոքրիկները, անկախ իրավիճակից, պետք է վայելեն իրենց մանկությունը»:

Ի դեպ, նշենք, որ «Barbi տիկինիկներ» երգի խոսքերի հեղինակը Վլադիմիր Պոդոսյանն է, երաժշտության գործիքավորումը՝Էմանուլ Հակոբյանինը, իսկ ռեժիսորը Հարություն Գեւորգյանն է:

ՀԵԼՈՈՒԻՆ

ՄԱԼԻՖԻՍԵՆՏԱ, ԿԼԵՈՊԱՏՐԱ...

Հոկտեմբերի 31-ին ամբողջ աշխարհում նշվում է Հելոուինի տոնը: Այս տոնը ժամանակակից համաշխարհային տոն է, որը սկիզբ է առել Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի տարածաշրջանում, եւ որի հիմքում Իռլանդիայի եւ Շոտլանդիայի կելտերի հին ավանդույթներն են: Հելոուինը ավանդաբար տոնում են եվրոպական եւ ամերիկյան երկրներում, սակայն պաշտոնապես հանգստյան օր չի համարվում:

Չնայած որ Հայաստանում Հելոուինն այնքան էլ ընդունելի տոն չէ, բայց, այնուամենայնիվ, հայկական շոուբիզնեսի մի քանի վառ կերպարներ փորձել են մասնակցել տոնին:

Տիկտոկեր, դերասանուհի Մագա Հարությունյանը Հելոուինին կերտել է Մալիֆիսենտայի կերպարը, իսկ լուսանկարներին կից գրել է. «Դու իմ թեյի բաժակն էիր, բայց ես հիմա գինի եմ խմում: Շնորհավոր Հելոուին»:

Իսկ, ահա, դերասանուհի, երգչուհի Մեգգի Բադիրյանը Հելոուինի տոնին հանդես է եկել Կլեոպատրայի կերպարով:

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՄԵՆԱԽՈՇՈՐ ՆՎԻՐԱՏՈՒՆ

«Ակբա» բանկը 2021 թվականին Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի ամենախոշոր նվիրատու ընկերությունն է. բանկը հիմնադրամին տրամադրել է ավելի քան 190 միլիոն ՀՀ դրամ:

Կատարած նվիրատվությունների համար «Ակբա» բանկը Զինծառայողների ապահովագրության հիմնադրամից մրցանակ է ստացել «ԱՐՑԱԽ ԱԴԱՄԱՆԴ» անվանակարգում:

Բանկը 2020 թվականին մեկնարկել եւ 2021 թվականի ամբողջ ընթացքում շարունակել է իր կողմից թողարկված քարտերի միջոցով կատարված յուրաքանչյուր գործառնության 0,3%-ն իր հասույթից ուղղել Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին՝ ընդհանուր առմամբ տրամադրելով ավելի քան 136 միլիոն ՀՀ դրամ:

Բանկը եւս 50 միլիոն ՀՀ դրամ միանվագ աջակցություն է տրամադրել հիմնադրամին՝ նպաստելով վերջինիս ընթացիկ խնդիրների շուտափույթ լուծմանը:

«Մեկը երկու դարձնենք» նախաձեռնության շրջանակում էլ «Ակբա»-ն Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին տրամադրել է ավելի քան 4 միլիոն ՀՀ դրամ:

«Ակբա» ֆինանսական խմբի մյուս անդամները՝ «Ակբա Լիզինգ»-ն ու «Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ»-ը, Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին են տրամադրել համապատասխանաբար 10 եւ 20 միլիոն ՀՀ դրամ:

Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին «Ակբա» ֆինանսական խմբի աջակցության ընդհանուր չափը 2021-ի վերջի դրությամբ կազմել է ավելի քան 220 միլիոն ՀՀ դրամ:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

Snap ԵՐԳԸ

«Եվրատեսիլ 2022» երգի հեղինակավոր մրցույթում Հայաստանի պատվիրակ Ռոզա Լինը հոկտեմբերի 31-ին հյուրընկալվել է ամերիկյան վարկանիշային The Late late Show with James Corden հաղորդմանը:

Երգչուհին շոուին կատարել է եվրատեսիլյան Snap երգը նոր մոտեցմամբ. նա Snap-ը հանդիսատեսին է ներկայացրել հայկական ժողովրդական գործիքների կիրառմամբ հայկական շնչով բեմում:

The Late late Show with James Corden ռեյտինգային հաղորդմանը հյուրընկալվել են այնպիսի աստղեր, ինչպիսիք են Նիքի Մինաժը, Սելենա Գոմեսը, Քայլի Ջենները, Քիմ Քարդաշյանը, Շոն Մենդեսը եւ այլք:

● *Նոյեմբերի 6-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կկայանա Երգեհոնի միջազգային փառատոնի փակման համերգը: Տոմսերի արժեքը՝1000-2000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Տնտեսական ընկերությունը ե՞րբ է համարվում դուստր ընկերություն:

Արմեն Գրիգորյան (56 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տնտեսական ընկերությունը համարվում է դուստր, եթե այլ (հիմնական) տնտեսական ընկերակցություն կամ ընկերություն, նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ նրանց միջեւ կնքված պայմանագրին համապատասխան՝ հնարավորություն ունի կանխորոշել նման ընկերության որոշումները:

Հիմնական ընկերակցությունը կամ ընկերությունը, որը դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունի, դուստր ընկերության հետ համապարտ պատասխանատվություն է կրում իր ցուցումների համաձայն կնքված գործարքների կատարման համար: Հիմնական ընկերակցությունը կամ ընկերությունը դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունեցող է համարվում, եթե այդ իրավունքը նախատեսված է դուստր ընկերության հետ կնքված պայմանագրում:

Դուստր ընկերության մասնակիցները (բաժնետերերը) իրավունք ունեն հիմնական ընկերակցությունից կամ ընկերությունից պահանջել հատուցելու նրա մեղքով դուստր ընկերությանը պատճառված վնասները: Վնասները հիմնական ընկերակցության կամ ընկերության մեղքով պատճառված են համարվում, եթե դրանք վրա են հասել դուստր ընկերության կողմից հիմնական ընկերակցության կամ ընկերության պարտադիր ցուցումները կատարելու հետեւանքով:

ՀՀ քննչական կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հիմնական ընկերակցության կամ ընկերության մեղքով դուստր ընկերության սնանկության դեպքում հիմնական ընկերակցությունը կամ ընկերությունը սուբսիդիար պատասխանատվություն է կրում նրա պարտքերի համար: Դուստր ընկերության սնանկությունը հիմնական ընկերակցության կամ ընկերության մեղքով առաջացած է համարվում, եթե այն վրա է հասել դուստր ընկերության կողմից հիմնական ընկերակցության կամ ընկերության պարտադիր ցուցումները կատարելու հետեւանքով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է սահմանվում ոչ լրիվ աշխատաժամանակը:

Սաթենիկ Մարկոսյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ սահմանվում է՝

1) աշխատողի եւ գործատուի համաձայնությամբ,

2) աշխատողի պահանջով՝ կապված նրա առողջական վիճակի հետ, բժշկական եզրակացության հիման վրա,

3) հղի կնոջ եւ մինչեւ մեկ տարեկան երեխա խնամող աշխատողի պահանջով,

4) հաշմանդամություն ունեցող անձի պահանջով՝ բժշկական եզրակացության հիման վրա, սակայն ոչ ավելի, քան վեց ամիս ժամանակով, եւ յուրաքանչյուր օրվա համար ոչ ավելի, քան օրվա համար սահմանված աշխատաժամանակի կեսը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամենամյա արձակուրդի տեւողությունը սահմանելու, աշխատանքային ստաժը հաշվարկելու, ավելի բարձր պաշտոնի նշանակելու, որակավորումը բարձրացնելու, ինչպես նաեւ աշխատողի աշխատանքային այլ իրավունքներ իրականացնելու ժամանակ ոչ լրիվ աշխատաժամանակի պայմաններում կատարված աշխատանքը հիմք չէ սահմանափակումներ կիրառելու համար:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեւանի Իսակովի պողոտայից Հաղթանակի կամուրջ տանող հատվածում տեղի է ունեցել ՃՏՊ: Պարզվել է, որ Mazda 6 մակնիշի ավտոմեքենան (վարորդ՝ Վ. Ղ., ծնված 1981թ.) դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից եւ բախվել էլեկտրական սյանը: Կա տուժած:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **1.11.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: